Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 10

ք. Երևան, 6 հոկտեմբերի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Խոջոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ):

Է.Բասենցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝

Գ. Ավետիսյան- ՍԱՏՄ ղեկավար,

Գ. Սարոյան- ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա.Գևորգյան-«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն,

Ա. Բաբայան «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն,

Մ. Երիցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ,

Ա.Հակոբյան - ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող,

Ա. Ավետիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական,
Լ. Մինասյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության խորհրդական

Բացակայում էին՝
Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ),
Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (Խորհրդի անդամ)

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է: Խորհրդի նախագահը ներկայացրեց օրակարգը:
Խորհրդի անդամները 7 կողմ ձայնով հաստատեցին խորհրդի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի երկրորդ եռամսյակի հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան, Ա.Խոջոյան, Ա.Ասոյան)

Գ. Ավետիսյանը հակիրճ ներկայացրեց Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի երկրորդ եռամսյակի հաշվետվության նախագիծը:

Հաշվետվության նախագծի սեղմ տարբերակը ներկայացվեց շնորհանդեսի տեսքով:

Նախագահը փաստեց, որ շնորհանդեսի և հաշվետվության նախագծի տեքստերում առկա են տարբերություններ, որն արդյունք է անփույթ աշխատանքի:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ շնորհանդես կազմող աշխատակիցները կնախազգուշացվեն, խիստ հանձնարարական կտրվի՝ հետագայում նման անփույթ վերաբերմունքը բացառելու նպատակով:

Նախագահն առաջարկեց հաշվետվության ամբողջականության տեսանկյունից նախագծում ներառել նաև նախորդ եռամսյակում կատարված և հաջորդ եռամսյակում ավարտված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև նախատեսել առանձին մաս՝ հանրային սննդի կետերում՝ մասնավորապես ռեստորաններում, խանութներում տիրող իրավիճակի մասին: Միաժամանակ հետագա հաշվետվությունները կազմել հակիրճ, բովանդակեն առավելապես նշելով խնդիրներն ու նորությունները:

Նախագահը հետաքրքրվեց «ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Ուկրաինայի սննդամթերքի անվտանգության և սպառողների պաշտպանության պետական ծառայության միջև կարանտինի և բույսերի պաշտպանության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի ընթացքի վերաբերյալ:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ համաձայնագրի նախագիծը ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ ուկրաինական կողմին փոխանցելու նպատակով:Նախագահը հայտնեց, անհրաժեշտ է որ համաձայնագրի նախագիծը մինչև 2022 թվականի մայիս ամիսը պատրաստ լինի, քանի որ մայիսին այց է նախատեսվում ՈՒկրաինա: Այցի շրջանակներում էլ կստորագրվի համաձայանգիրը:

Ա.Ասոյանն առաջարկեց ստուգել ինչու՞ մի մարզում խախտումները արձանագրվում են 100 տոկոս արդյունքով, իսկ հարևան մարզում՝ 10 տոկոս:

Գ.Ավետիսյանը հայտեց, որ կստուգեն տվյալները և կտեղեկացվի խորհրդին:

Նախագահը հետաքրքրվեց անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում տիրող իրավիճակով, ինչպես նաև առկա խնդիրներով:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ կենդանիների հիվանդությունների մասով իրավիճակը այս եռամսյակում գնահատում է լավ, իսկ անասնաբուժության բնագավառում խնդիրների առաջացումը հիմնականում պայմանավորված է կենդանիների պատվաստումների, ինչպես նաև անասնահամաճարակային այլ միջոցառումների ժամանակին և ճիշտ չիրականացմամբ:

Նշեց, որ բուսասանիտարիայի բնագավառում վերջին երկու տարիների համար կազմվել է բուսասանիտարական իրավիճակի վերաբերյալ քարտեզ, որտեղ արտացոլված են բնագավառում առկա խնդիրները:

Այս բնագավառում խնդիրները խորքային են: Տեսչական մարմնի մարզային կենտրոնների մասնագետներին հանձնարարվել է խորհրդատվություն մատուցել բույսերի պաշտպանության նպատակով իրականացվող միջոցառումների կազմակերպման ժամանակ՝ դրանք առավել գրագետ կազմակերպելու համար: Դա բավավար չէ խնդրի կանոնակարգման համար, քանի որ մի հողատեր լիարժեք և ժամանակին իրականացնում է բույսերի պաշտպանության միջոցառումներ, սակայն հարևան հողամասի տերը տարիներով ոչ մի միջոցառում չի իրականացնում:

Ամփոփելով Գ.Ավետիսյանը փաստեց, որ հիմնական խնդիրը կարանտին կամ ոչ կարանտին վնասակար օրգանիզմների դեմ պայքարի ոչ ճիշտ, ինչպես նաև ոչ համակարգված կատարումն է: Որոշակի լուծում կարելի է տեսնել յուրաքանչյուր համայնքում մասնագիտական ծառայությունների ստեղծմամբ, որոնք կմատուցեն խորհրդատվական ծառայություններ:

Ա.Խոջոյանը ևս փաստեց, որ բուսասանիտարիայի բնագավառում առկա է կարանտին վնասակար օրգանիզմների տարածման լուրջ վտանգ:

Գ.Ավետիսյանը առաջարկեց, Ա. Խոջոյանը համաձայնվեց բուսասանիտարիայի բնագավառում առկա խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման նպատակով կազմակերպել առանձին քննարկում:

Գ.Ավետիսյանը ներկայացրեց նաև հանրապետությունում անասնագերեզմանների վերաբերյալ տեղեկատվություն:

Նախագահն առաջարկեց քննարկել անասնագերեզմանների կարգավորման հնարավոր տարբերակները՝ դիտարկելով առանց թափոն սպանդանոցների գործարկումը:

Նախագահը Գ.Ավետիսյանին առաջարկեց մշակել և Խորհրդի անդամների քննարկմանը ներկայացնել Տեսչական մարմնի կողմից ներկա պահին իրականացվող միջոցառումները և առաջիկա 5 տարիների տեսլականը՝ ռազմավարության, հայեցակարգի, ճանապարհային քարտեզի կամ այլ փաստաթղթի ձևաչափով:

Նախագահն ու Ա.Ասոյանը նկարագրեցին փաստաթղթի մոտավոր կառուցվածքն ու բովանդակությունը, թիրախները:

Միաժամանակ Նախագահը նշեց նաև սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում առկա խնդիրների լուծման, ինչպես նաև համակարգի զարգացման համար ներգրավել նաև միջազգային կառույցներին, ինչպես նաև ֆինանսական խնդիրների տեսանկյունից օգտվել օրենքով չարգելված աղբյուրներից: Շեշտեց նաև, որ միջազգային ծրագրերի ներգրավման գործընթացում նախաձեռնող կողմ հանդես գա Տեսչական մարմինը:

Նախագահն առաջարկեց քննարկել լուծումներ, որոնցով կենդանիների պատվաստումները կպատվիրակվեն մասնավորին (outsource), իսկ բուսասանիտարական միջոցառումները կատարվեն այնպես, որ գյուղացիների պետական սուբսիդավորման և բանկային վարկավորման պայմանագրերում անպայմանորեն ներառվեն պարտավորություն՝ պարտադիր բուսասանիտարական միջոցառումների կիրառելու մասին, ինչպես նաև քննարկել ACBA բանկի հետ համագործակցությամբ այս ոլորտում հարաբերությունները կարգավորելու հնարավոր տարբերակները:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ Նախագահի փաստաթղթի ստեղծման աշխատանքները կիրականացվեն ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ:

Նախագահը Գ.Ավետիսյանի ուշադրությունը հրավիրեց հանրապետությունում կազմակերպվող փառատոնների սանիտահամաճարակային իրավիճակի վրա: Առաջարկեց ձեռնարկել հնարավոր միջոցներ ի սկզբանե պատշաճ սանիտարահամաճարակային իրավիճակ ապահովելու համար:

Գ.Ավետիսյանը հայտնեց,որ համապատասխան աշխատանքներ կտարվեն փառատոնների կազմակերպիչների հետ:

Ա.Ասոյանը հետաքրքրվեց ստուգումների ժամկետներով, առաջարկեց հնարավորության դեպքում նվազեցնել ժամկետները: Միաժամանակ նկատեց, որ անհրաժեշտ է ապահովել հարկային գաղտնիքին, հարկային բազաներին հասանելիություն՝ սննդամթերքի անվտանգության հետգծելիությունը ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետվությունը կլրամշակվի Խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա՝ Խորհրդի անդամները 7 կողմ ձայնով որոշեցին .

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի երկրորդ եռամսյակի հաշվետվության նախագծին:

2. «Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան, Ա.Ասոյան)

Ա.Ասոյանը հայտնեց, որ «Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն այս պահին ներկայացված է ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշմանը:

Նախագահն առաջարկեց, խորհրդի անդամները համաձայնվեցին «Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը քննարկել ՀՀ արդարադատության նախարարության կարծիքը ստանալուց հետո:

Միաժամանակ նախագահը Տեսչական մարմնին առաջարկեց քննարկել նախագծի վերաբերյալ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի ներկայացրած դիրքորոշումը:

3. «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2017 թվականի հունիսի 15-ի N 662-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ:

Ա.Ասոյանը հայտնեց, որ Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը մինչև ընդունելն անհրաժեշտ է տնտեսավարող սուբյեկտների մոտ կատարել դրանց փորձարկում: Միաժամանակ հայտնեց, որ կներկայացվի գրասենյակի առաջարկությունները:

Գ.Սարոյանը հայտնեց, որ օրենքով ստուգաթերթերի փորձարկման ընթացակարգ սահմանված չէ:

Ա.Ասոյանը տեղեկացրեց, որ դա բխում է տնտեսավարող սուբյեկտների շահերից:

Նախագահը Գ.Ավետիսյանին հանձնարարեց փորձարկել ստուգաթերթերը և հաջորդ նիստին նախագիծը ներկայացնել քննարկման:

Նախագահի առաջարկությամբ, Խորհրդի անդամների համաձայնությամբ որոշվեց 2021 թվականի հոկտեմբերի 20-ին ժամը 13.00-ին հրավիրել արտահերթ նիստ՝ օրակարգում ներառելով այս նիստի ընթացքում չքննարկված հարցերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ